ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Երևան 0009, Իսահակյան 28

Հեռ. (010) 52-83-70, (010) 52-94-32

Էլ.փոստ: secretariate@tvradio.am

www.tvradio.am

16.04.20 № 03-247

«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ-ի տնօրեն

տիկին Ա. Բաբայանին

Հարգելի տիկին Բաբայան

Հիմք ընդունելով վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2020 թվականի ապրիլի 3-ի թիվ 02/16.4/13656-2020 գրությունը՝ համաձայն որի, հաշվի առնելով ՀՀ պետական վերահսկողական ծառայության վարչապետի աշխատակազմ նեկայացված հանրային հատվածի կազմակերպությունների կողմից ներքին աուդիտի արտապատվիրակման եղանակով ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված մրցույթների և դրանց շրջանակներում կնքված պայմանագրերի ուսումնասիրման արդյունքները, ինչպես նաև դրանց վերաբերյալ ծառայության դիտարկումները՝ վարչապետի հանձնարարությամբ, առաջարկվում է ապահովել կնքված պայմանագրերի լուծումը:

Ելնելով վերոգրյալից, ծանուցում եմ, որ 2019 թվականի դեկտեմբերի 27-ին Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի և «Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊ ընկերության միջև «ՀՌՀ-ԳՀԾՁԲ-19/18» ծածկագրով պետության կարիքների համար ներքին աուդիտի ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիրը և հետագայում դրա հիման վրա 2020 թ մարտի 9-ին կնքված համաձայնագիրը լուծվում է:

«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊ ընկերությունը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Հարգանքով՝

Ս. Խաչատրյան

Կատարող՝ Ա. Մատինյան
հեռ. 010 58 80 57